



Առողջապահության
Նախարարություն
Ministry of Health of the Republic of Armenia

AUA American University
of Armenia

ԹՐՓԱՆՃԵԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ


ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ COVID-19 ՀԱԿԱՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՇՃԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Նախնական զեկույց

Հայաստանի ամերիկյան համալսարանի Ավետիսեան
Օնանեան առողջապահական ծառայությունների
հետազոտման և զարգացման կենտրոն

Հայաստանի Հանրապետության Առողջապահության
նախարարություն

Երևան 2020



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԱՆՏԻՔԻ ԽՈՍՔ.....	iii
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	1
Տվյալներ այլ երկրներից.....	1
Հետազոտության նպատակները	2
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	4
Հետազոտության կառուցվածքը.....	4
Հետազոտության անցկացման տեղանքն ու ընտրանքի ձևավորումը.....	4
Հետազոտության մասնակիցների ընդգրկում.....	4
Տվյալների հավաքագրում.....	5
Հետազոտության գործիքները	5
Նմուշների տեղափոխում և լաբորատոր հետազոտություն.....	6
Վարակի վերահսկման և կանխարգելման միջոցառումներ.....	7
Էթիկական նկատառումներ	7
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ	8
Ընդհանուր տվյալներ	8
ՀՂՈՒՄՆԵՐ	20
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....	22

ԵՐԱՆՏԻՔԻ ԽՈՍՔ

Ծրագիրը հնարավոր է դարձել Հայաստանի Հանրապետության Առողջապահության նախարարության (ՀՀ ԱՆ) շարունակական և անվերապահ աջակցման շնորհիվ:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հետազոտության մասնակիցներին և հետազոտությանը մասնակցած բժշկական հաստատություններին իրենց տրամադրած ժամանակի, համագործակցության և աջակցության համար:

Շնորհակալություն ենք հայտնում ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հարցերի համատեղ ծրագրին (UNAIDS) հետազոտության համար թեստեր ձեռք բերելու, լաբորատոր և դաշտային աշխատանքների համար անհրաժեշտ ռեսուրսների տրամադրման համար, ինչպես նաև, ՀՀ ԱՆ Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտին տվյալների հավաքագրման փուլում կազմակերպչական և դաշտային աշխատանքներին աջակցելու համար:

Մեր երախտագիտությունն ենք հայտնում ՀՀ ԱՆ ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի բուժքույրեր Սուսաննա Թավաքալյանին, Մյուզաննա Պետրոսյանին, Անահիտ Բալբալյանին և լաբորատորիայի անձնակազմին՝ Թամարա Հովսեփյան, Տաթև Ավագյան, Ռուզաննա Հարոյան:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի դեկտեմբերին Չինաստանի Վուհան քաղաքում գրանցվեց նոր տեսակի կորոնավիրուս, որը հետագայում տարածվեց՝ դառնալով համավարակի պատճառ: Հիվանդության հարուցիչը SARS-CoV-2-ն է, իսկ նրա առաջացրած հիվանդությունը՝ COVID-19:¹

Հիվանդության տարածումը աճում է օրեցօր: 2020-ի հուլիսի 28-ի տվյալներով աշխարհի ավելի քան 210 երկրներում և տարածքներում գրանցվել է հիվանդության մոտ 16,932,000 և մահվան 664,000 դեպք:² Վերջին հետազոտությունները ցույց են տվել, որ 45% դեպքերում հիվանդությունն ընթանում է անախտանիշ՝ առանց որևէ կլինիկական նշանների արտահայտման, սակայն այս մարդկանց մոտ ձևավորվում են հիվանդության նկատմամբ հակամարմիններ:³ Այս մարդիկ մեծ դեր են խաղում հիվանդության փոխանցման և տարածման հարցում: Համավարակի դեմ արդյունավետ պայքարի համար անհրաժեշտ է հասկանալ, թե բնակչության, որ մասն է ենթարկվել վարակի ազդեցությանը, որոնք են վարակվելու հավանականությունը մեծացնող ռիսկի գործոնները, և օգտագործել այս տեղեկատվությունը վարակի դեմ պայքարի միջոցները բարելավելու համար:⁴ Շճաբանական հետազոտությունները հնարավորություն են տալիս պատկերացում կազմել, թե բնակչության քանի տոկոսն է ենթարկվել վարակի ազդեցությանը և հասկանալ համաճարակաբանական իրավիճակը: Ներակայումս աշխարհի տարբեր երկրներում բուժաշխատողների և բնակչության շրջանում կատարվում են բազմաթիվ հետազոտություններ՝ COVID-19 նկատմամբ հակամարմինների տարածվածությունը գնահատելու նպատակով:

Տվյալներ այլ երկրներից

Բուլղարիայում բնակչության, բուժաշխատողների և ոստիկանության աշխատակիցների շրջանում կատարված մի հետազոտության համաձայն, IgM համարամիներ հայտնաբերվել է 1%-ի մոտ, IgG՝ 1.2%-ի մոտ, իսկ երկուսը միաժամանակ՝ 2.6%-ի մոտ: Սեռով պայմանավորված տարբերություններ չեն հայտնաբերվել: Մասնակիցների 78.6%-ի մոտ չի գրանցվել հիվանդությանը բնորոշ որևէ կլինիկական նշան:⁸

Գերմանիայում մարտ-ապրիլ ամիսներին անցկացված հետազոտությունը ցույց է տվել, որ հակամարմինների տարածվածությունը բուժաշխատողների շրջանում 1.6% է: Հակամարմինների տարածվածությունը եղել է ավելի բարձր միջին ռիսկային խմբում՝ 5.4%, իսկ բարձր ռիսկային խմբում այն եղել է ավելի ցածր՝ 1.2%:⁹

Չինաստանի Վուհան քաղաքում, որտեղ արձանագրվել էին հիվանդության առաջին դեպքերը, բուժաշխատողների շրջանում հակամարմինների տարածվածությունը եղել է 3.8% հիվանդանոցներում և 3.2% համայնքային բուժհաստատություններում մարտ-ապրիլ ամիսներին: Ընդ որում, տվյալ հետազոտության համաձայն, հակամարմինների տարածվածությունը ավելի բարձր է եղել համաճարակի էպիկենտրոնին մոտ հատվածներում, և ավելի ցածր՝ Չինաստանի այլ քաղաքների բուժաշխատողների շրջանում:¹¹

Իսպանիայում, որտեղ արձանագրվել էր հիվանդության մեծ ալիք, կատարվել են հակամարմինների տարածվածությունը գնահատող բազմաթիվ հետազոտություններ: Բարսելոնա քաղաքում 7,563 բուժաշխատողների շրջանում անցկացված հետազոտությունը ցույց է տվել IgG տեսակի հակակորոնավիրուսային հակամարմինների 9.4% տարածվածություն:¹³ Ամենացածր տարածվածությունը գրանցվել է վարչական հատվածի աշխատակիցների շրջանում՝ 6.4%: Ըստ մեկ այլ իսպանական հետազոտության՝ IgM, IgG և IgA տեսակի հակամարմինների տարածվածությունը բուժաշխատողների շրջանում եղել է համապատասխանաբար 8.1%, 7.6% և 6.2%:¹⁴

Բելգիական հիվանդանոցներից մեկում բուժաշխատողների շրջանում իրականացված հետազոտության տվյալներով IgG հակամարմինների տարածվածությունը կազմել է 6.4%: ընդ որում տարիքով և սեռով պայմանավորված վիճակագրորեն հավաստի տարբերություններ չեն նկատվել: Ավելին, COVID-19 հիվանդների բուժման մեջ ներգրավված լինելը, COVID-19 ունեցող գործընկերների հետ շփումը նույնպես էական ազդեցություն չեն ունեցել հակամարմինների տարածվածության վրա: Մինչդեռ հակամարմինների տարածվածությանը նպաստող գործոններից են եղել ընտանիքում COVID-19 կասկածելի կամ հաստատված դեպքերի հետ շփումը:¹⁷

Հետազոտության նպատակները

Հետազոտության *առաջնային նպատակը* Հայաստանում COVID-19 բուժում իրականացնող բուժհաստատությունների, ներառյալ՝ հիվանդանոցների և առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) օղակի բուժաշխատողների շրջանում COVID-19 դեմ հակամարմինների տարածվածության գնահատումն է:

Հետազոտության *երկրորդային նպատակները* ներառում են՝

- հակամարմինների առկայության և ժողովրդագրական գործոնների ու ուղեկցող հիվանդությունների միջև կապի գնահատում
- բուժաշխատողների շրջանում վարակի տարածման կանխարգելմանն ու կառավարմանն ուղղված միջոցառումների պահպանման գնահատում
- վարակի անախտանիշ ձևի և ժողովրդագրական գործոնների ու ուղեկցող հիվանդությունների միջև կապի գնահատում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության կառուցվածքը

Մեկանգամյա լայնակի (խաչաձև) հետազոտություն էրկու հիմնական բաղադրիչներով՝ հակամարմինների թեստավորում և հարցում: Հակամարմինների թեստավորումը ներառել է արյան նմուշառում և արյան շճաբանական հետազոտություն լաբորատոր պայմաններում:

Հետազոտության անցկացման տեղանքն ու ընտրանքի ձևավորումը

Բուժաշխատողների շրջանում հետազոտությունն անցկացնելու նպատակով ընդգրկվել են COVID-19 ախտորոշմամբ ու բուժմամբ զբաղվող և ՀՀ Առողջապահության նախարարության (ԱՆ) չորս խոշոր հիվանդանոցներ՝ ներառյալ մեկ մարզային և երեք Երևանյան: Ընդգրկվել են նաև Երևանի առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) օղակի 17 պետական հաստատություններից (պոլիկլինիկաներ) 10 ամենախոշորները, որոնք տեղակայված են մայրաքաղաքի տարբեր վարչական շրջաններում (Պատկեր 1):

Նշված հիվանդանոցներից հետազոտությանը մասնակցելու համար հրավիրվել է ողջ բուժանձնակազմը՝ ներառյալ բուժական, վարչական և սպասարկող: ԱԱՊ օղակի բուժհաստատություններից հետազոտությանը մասնակցելու հրավիրվել են ընտրված պոլիկլինիկաների տեղամասային թերապևտները և բուժքույրերը, ռենտգեն կաբինետի անձնակազմը (ներառյալ բժիշկ, բուժքույր, մայրապետ):

Պատկեր 1. Ընտրված ԱԱՊ հաստատությունների տեղակայումը



Հետազոտության մասնակիցների ընդգրկում

Համագործակցելով ԱՆ հետ՝ հետազոտական թիմը կապ է հաստատել բուժհաստատության ղեկավարության հետ, որի միջոցով էլ ընդգրկման պահանջներին համապատասխանող մասնակիցները հրավիրվել են տվյալ

բուժհաստատության ներսում նախապես հատկացված և պատրաստված նմուշառման սենյակ:

Մեծաքանակ կուտակումներից խուսափելու և անվտանգ հեռավորությունն ապահովելու համար հետազոտության խմբի կողմից սահմանվել է նմուշառման հստակ ժամանակացույց: Յուրաքանչյուր հաստատության ղեկավարության համակարգմամբ՝ մասնակիցները մոտեցել են նմուշառման սենյակ նախապես սահմանված առանձին ժամերի:

Տվյալների հավաքագրում

Տվյալների հավաքագրման առաջին փուլում կատարվել է հետազոտության մասնակիցների ընդգրկում և նմուշառում, որը տեղի է ունեցել 2020թ. հունիսի 12-ից հուլիսի 16-ն ընկած ժամանակահատվածում: Յուրաքանչյուր մասնակից նախապես գրավոր իրազեկ համաձայնություն տրամադրելուց հետո ընդգրկվել է արյան նմուշառման գործընթացում: Տվյալների հավաքագրման երկրորդ փուլում, հետազոտական թիմը նմուշառում անցած մասնակիցների նույնականացման համարները (անանուն հարցում ապահովելու համար) և հեռախոսահամարները տրամադրել է նախապես ընտրված և վերապատրաստված փորձառու հարցազրուցավարներին՝ հեռախոսային հարցումներն իրականացնելու նպատակով:

Զուգահեռաբար, լաբորատորիայում որոշվել է հակամարմինների առկայությունն արյան նմուշներում: Այնուհետև կապ է հաստատվել հարցմանն արդեն մասնակցած կամ հարցումից հրաժարված մասնակիցների հետ՝ թեստերի արդյունքները հայտնելու համար:

Տվյալների հավաքագրման ընթացքում կիրառվել են հետազոտական թիմի կողմից մշակված ստանդարտ ձևաթղթեր (Հավելված 1, 2, 3): Բոլոր միջոցառումները կատարվել են որակավորված և վերապատրաստված մասնագետների կողմից:

Հետազոտության գործիքները

Հետազոտության գործիքները մշակվել են՝ հիմնվելով Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ)՝ բուժաշխատողների շրջանում շճահամաճարակաբանական հետազոտությունների անցկացման գործելակարգի վրա: Հարցաշարը բաղկացած է հինգ հիմնական բաժիններից: Դրանք են՝ (1) ժողովրդագրական տվյալներ, (2) վարակի վերահսկման և կանխարգելման (ՎՎԿ) ուղղված միջոցառումների պահպանում, (3) COVID-19 վարակակրի հետ շփման

ինտենսիվություն, (4) ինչպես նաև COVID-19 բնորոշ ախտանշաններ և (5) ուղեկցող հիվանդություններ. ընդհանուր 34 հարց (Հավելված 4): Մինչև տվյալների հիմնական հավաքումը հետազոտող թիմը փորձարկել է հետազոտման գործիքները և տվյալների հավաքման ընթացքը: Այնուհետև դրանք կատարելագործվել են:

Նմուշների տեղափոխում և լաբորատոր հետազոտություն

Քանի որ նմուշառումը կատարվել է բուժաստատություններում, կենսաբանական նմուշների տեղափոխումը լաբորատորիա կազմակերպվել է հնարավորինս արագ՝ մի քանի ժամվա ընթացքում: Նմուշների հավաքագրումը կատարվել է շիճուկ-բաժանարար փորձանոթներում և տեղափոխվել 4°C ջերմաստիճանի պայմաններում:^a

Արյան նմուշառումն ու լաբորատոր հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԱՆ ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի լաբորատորիայի անձնակազմի կողմից: Հայաստանում բուժաշխատողների շրջանում շճահամաճարակաբանական հետազոտության իրականացման շրջանակում պատշաճ թեստավորում անցկացնելու նպատակով կենտրոնի լաբորատոր աշխատակազմը անցել է համապատասխան վերապատրաստում, ինչպես նաև լաբորատորիայի տեխնիկական կարողությունները համապատասխանեցվել են Elecsys® Anti-SARS-CoV-2-ը թեստավորում իրականացնելու համար:

Օգտագործելով Elecsys® Anti-SARS-CoV-2-ը in-vitro թեստը՝ իրականացվել է իմունոգլոբուլին G (IgG) և M (IgM) տեսակի հակամարմինների առակայությունը հայտնաբերող շճաբանական հետազոտություն: Թեստի դրական արդյունքը ենթադրում է, որ անձն անցյալում վարակված է եղել SARS-CoV-2-ով, և որ վիրուսի նկատմամբ ձևավորվել են հակամարմիններ: Elecsys® Anti-SARS-CoV-2-ն ունի 100.0% զգայունություն և 99.8% սպեցիֆիկություն (ՊՇՌ ախտորոշումից 14 օր հետո):

Թեստի արդյունքները մեկնաբանվել են թվային արդյունքների միջոցով՝ հիմք ընդունելով 1-ը որպես սահմանային շեմ/ցուցիչ (cut-off index) (Աղյուսակ 1):

^a Նմուշների տեղափոխումը կատարվել է ըստ Առողջապահության նախարարության 2014թ. հունիսի 14 – ի «Վտանգավոր բեռների փոխադրման նկատմամբ սանիտարահիգիենիկ պահանջները հաստատելու և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 1409-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 38-Ն հրամանի պահանջների:

Աղյուսակ 1. Թեստի արդյունքների մեկնաբանություն

Թվային արդյունք	Արդյունքի մասին հաղորդագրություն	Արդյունքի մեկնաբանություն
COI <1.0	Ոչ ռեակտիվ	SARS-CoV-2-ի դեմ հակամարմիններ չեն հայտնաբերվել
COI ≥1.0	Ռեակտիվ	SARS-CoV-2-ի դեմ հակամարմիններ հայտնաբերվել են

Վարակի վերահսկման և կանխարգելման միջոցառումներ

Արյան նմուշառումները կատարվել են ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի նմուշառող բուժքույրերի կողմից՝ վարակի կանխարգելմանն ուղղված բոլոր կանոնների պահպանմամբ: Հետազոտական ողջ թիմն ապահովված է եղել անհրաժեշտ անհատական պաշտպանական միջոցներով և ախտահանիչ նյութերով:

Էթիկական նկատառումներ

Հետազոտության պրոտոկոլը հաստատվել է Հայաստանի ամերիկյան համալսարանի էթիկայի հանձնաժողովի կողմից: Հետազոտության մաս կազմող բոլոր միջոցառումներից առաջ յուրաքանչյուր մասնակից տվել է իր մասնակցությունը հաստատող գրավոր իրազեկ համաձայնագիր՝ երկու օրինակով:

Մասնակիցների գաղտնիությունը ապահովվել է յուրաքանչյուրին նույնականացման համարի կցմամբ: Յուրաքանչյուր մասնակցի կցված նույնականացման համարի մասին տեղեկատվությունը հասանելի է եղել միայն հետազոտական խմբի որոշ անդամներին: Վերջինս պահվել է գաղտնի և հավաքագրված այլ տվյալներից առանձին:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ընդհանուր տվյալներ

Հետազոտության մեջ ընդգրկվել են 1148 բուժաշխատողներ 14 բուժհաստատություններից (4 հիվանդանոց, 10 ԱԱՊ հաստատություն): Դրանցից 10 ԱԱՊ հաստատություններում և 3 հիվանդանոցներում իրականացվել է արյան նմուշառում և հեռախոսային հարցում, որին մասնակցել են 774 բուժաշխատողներ: Հիվանդանոց 4-ը մասնակցել է հետազոտությանը՝ տրամադրելով միայն COVID-19 դեմ հակամարմինների թեստավորման արդյունքները, որ ստացվել են *Elecsys® Anti-SARS-CoV-2 in-vitro* թեստերով մայիսի 20-31-ը:

Ընդհանուր առմամբ 30 բուժաշխատող հրաժարվել է մասնակցել հետազոտությանը, իսկ 29-ը ընդգրկվել են նմուշառման մեջ, սակայն չեն մասնակցել հարցմանը:

Վերջիններիս, ինչպես նաև Հիվանդանոց 4-ի տվյալները սույն զեկույցում ընդգրկվել են միայն Աղյուսակ 2 և 3-ում և Պատկեր 2-ում. մնացած աղյուսակները և պատկերները արտացոլում են բացառապես այս մասնակիցների տվյալները, որոնք մասնակցել են և՛ նմուշառմանը, և՛ հարցմանը:

Աղյուսակ 2-ում ներկայացված է հետազոտության մասնակիցների թիվը և հետազոտության տարբեր բաղադրիչներում նրանց ընդգրկվածությունը՝ ըստ հաստատությունների:

Աղյուսակ 2. Մասնակիցների թիվը և հետազոտության տարբեր բաղադրիչներում նրանց ընդգրկման համամասնությունը՝ ըստ հաստատությունների

Հաստատություն Նույնականացման համար (ID)	Հետազոտությանը մասնակցելու ենթակա բուժաշխատողներ n	Մասնակիցների ընդգրկվածությունը նմուշառման մեջ %, (n)	Նմուշառված մասնակիցների ընդգրկվածությունը հարցման մեջ %, (n)
Հիվանդանոց 1	200	80.5 (161)	98.7 (159)
Հիվանդանոց 2	161	61.5 (99)	95.9 (95)
Հիվանդանոց 3	282	57.4 (163)	93.8 (153)
Հիվանդանոց 4	360	96.1 (346)	
Պոլիկլինիկա 5	70	85.7 (60)	96.7 (58)
Պոլիկլինիկա 6	51	86.3 (44)	90.9 (40)
Պոլիկլինիկա 7	42	73.8 (31)	100.0 (31)

Հաստատություն Նույնականացման համար (ID)	Հետազոտությանը մասնակցելու ենթակա բուժաշխատողներ n	Մասնակիցների ընդգրկվածությունը նմուշառման մեջ %, (n)	Նմուշաված մասնակիցների ընդգրկվածությունը հարցման մեջ %, (n)
Պոլիկլինիկա 8	33	57.6 (19)	100.0 (19)
Պոլիկլինիկա 9	41	80.5 (33)	90.9 (30)
Պոլիկլինիկա 10	47	80.9 (38)	100.0 (38)
Պոլիկլինիկա 11	46	69.6 (32)	100.0 (32)
Պոլիկլինիկա 12	28	75.0 (21)	100.0 (21)
Պոլիկլինիկա 13	77	87.0 (67)	95.5 (64)
Պոլիկլինիկա 14	36	94.4 (34)	100.0 (34)
Ընդհանուր	1474	78.0 (1148)	96.3 (774)

Հիվանդանոցների բուժանձնակազմից հետազոտության մեջ ընդգրկված մասնակիցների ընդհանուր թիվը կազմել է 769 հոգի, որոնցից 18.5%-ի մոտ (n=142) հայտնաբերվել են COVID-19 դեմ հակամարմիններ: Աղյուսակ 3-ում ներկայացված են հիվանդանոցներից հետազոտության մեջ ընդգրկված բուժանձնակազմի սեռատարիքային կազմը և մասնագիտացումները՝ ըստ COVID-19-ի դեմ հակամարմինների առկայության կամ բացակայության:

Աղյուսակ 3. Հիվանդանոցների բուժանձնակազմի շրջանում հետազոտության հիմնական փոփոխականների նկարագրական վիճակագրություն. յուրաքանչյուր փոփոխականի համար 100%-ը հաշվված է տողով

Փոփոխականներ	Ընդհանուր մասնակիցներ N = 769, % (n)	COVID-19 ՀՄ ունեցող մասնակիցներ N = 142 (18.5%), % (n)	COVID-19 ՀՄ չունեցող մասնակիցներ N = 627 (81.5%), % (n)	P արժեք
Սեռ	սյունակով	տողով		0.380
Արական	20.7 (159)	19.5 (31)	80.5 (128)	
Իգական	79.1 (608)	17.9 (110)	81.9 (498)	
<i>Բացակայող տվյալներ</i>	0.3 (2)	50.0 (1)	50.0 (1)	
Մասնագիտություն				0.635
Բժիշկ	24.2 (186)	19.9 (37)	79.6 (148)	
Ռենտգենոլոգ	0.7 (5)	20.0 (1)	80.0 (4)	
Ռենտգեն- տեխնիկ	0.5 (4)	0.0	100.0 (4)	
Բուժքույր	42.1 (324)	20.4 (66)	79.6 (258)	

Փոփոխականներ	Ընդհանուր մասնակիցներ N = 769, % (n)	COVID-19 ՀՄ ունեցող մասնակիցներ N = 142 (18.5%), % (n)	COVID-19 ՀՄ չունեցող մասնակիցներ N = 627 (81.5%), % (n)	P արժեք
Մայրապետ	19.2 (148)	16.9 (25)	83.1 (123)	
Ղեկավարություն	6.9 (53)	13.2 (7)	86.8 (46)	
Ծառայողական անձնակազմ	3.1 (24)	12.5 (3)	87.5 (21)	
Լաբորատոր անձնակազմ	2.5 (19)	10.5 (2)	89.5 (17)	
Այլ ^b	0.8 (6)	0.0	100.0 (6)	
Տարիքային կազմ				0.959
< 30	10.3 (79)	16.5 (13)	83.5 (66)	
30-59	37.6 (289)	17.3 (50)	82.4 (238)	
60 +	3.5 (27)	18.5 (5)	81.5 (22)	
<i>Բացակայող տվյալներ</i>	48.6 (374)	19.5 (73)	80.5 (301)	

ԱԱՊ օղակի բուժհաստատություններից հետազոտության մեջ ընդգրկված մասնակիցների ընդհանուր թիվը կազմել է 379 հոգի, որոնցից 7.9%-ի մոտ (n=30) հայտնաբերվել են COVID-19 դեմ հակամարմիններ: Առյուսակ 4-ում ներկայացված են ԱԱՊ օղակից հետազոտության մեջ ընդգրկված աշխատակիցների սեռատարիքային կազմը և մասնագիտացումները՝ ըստ COVID-19 դեմ հակամարմինների առկայության կամ բացակայության: Ըստ հետազոտության արդյունքների, հակամարմինների տարածվածության մեջ զգալի տարբերություն նկատվում է ԱԱՊ օղակի ռենտգենոլոգների մոտ: Հակամարմինների տարածվածությունն այս խմբում ավելի մեծ է, քան ԱԱՊ օղակի մնացած մասնագիտական խմբերում, սակայն վիճակագրորեն հավաստի տարբերություն ցույց է տալիս միայն համեմատած տեղամասային թերապևտների:

^b Այլ՝ ներառում է համաճարակաբանին և օրթոպեդիկ տեխնիկներին


Աղյուսակ 4. ԱԱՊ օդակի բուժաշխատողների շրջանում հետազոտության հիմնական փոփոխականների նկարագրական վիճակագրություն (N=379). յուրաքանչյուր փոփոխականի համար 100%-ը հաշվված է տողով

Փոփոխականներ	Ընդհանուր մասնակիցներ N = 379, % (n)	COVID-19 ՀՄ ունեցող մասնակիցներ N = 30 (7.9%), % (n)	COVID-19 ՀՄ չունեցող մասնակիցներ N = 349 (92.1%), % (n)	p արժեք
Սեռ	սյունակով	տողով		0.558
Արական	1.8 (7)	0.0	100.0 (7)	
Իգական	97.9 (371)	8.1 (30)	91.9 (341)	
<i>Բացակայող տվյալ</i>	0.3 (1)	0.0	100.0 (1)	
Մասնագիտություն				
Տեղամասային թերապևտ	40.9 (155)	4.5 (7)	95.5 (148)	0.005^c
Տեղամասային բուժքույր	48.5 (184)	9.8 (18)	90.2 (166)	
Ռենտգենոլոգ	4.2 (16)	25.0 (4)	75.0 (12)	
Ռենտգեն տեխնիկ	5.0 (19)	5.3 (1)	94.7 (18)	
Ռենտգեն բաժանմունքի մայրապետ	1.3 (5)	0.0	100.0 (5)	
Տարիքային կազմ				
< 30	1.8 (7)	28.6 (2)	71.4 (5)	0.087
29-59	65.4 (248)	6.9 (17)	93.1 (231)	
60 +	29.2 (111)	9.9 (11)	90.1 (100)	

^c Ռենտգենոլոգը համեմատած տեղամասային թերապևտի

Պատկեր 2-ում ցույց է տրված հակամարմինների տարածվածությունն ըստ բուժհաստատություններում անձնակազմի թվի:

Պատկեր 2. COVID-19 հակամարմինների տարածվածությունն ըստ բուժհաստատություններում անձնակազմի թվի



Հետազոտության հարցման 774 մասնակիցներից 4%-ի (n=31) մոտ եղել է նախկինում ՊՇՌ մեթոդով հաստատված COVID-19:

Հետազոտության մասնակիցների շրջանում COVID-19 ախտորոշման վերաբերյալ մանրամասները ներկայացված են Աղյուսակ 5-ում: Աղյուսակը ներառում է մասնակիցների կողմից վարակի հնարավոր աղբյուրների և վարակման ամսի մասին տեղեկություն՝ ըստ բուժհաստատությունների:


Աղյուսակ 5. ՊՇՌ հաստատված COVID-19 տարածվածությունը, վարակի հնարավոր աղբյուրները և ախտորոշման ամիսը՝ ըստ բուժահաստատությունների. յուրաքանչյուր փոփոխականի համար 100%-ը հաշվված է սյունակով

Փոփոխականներ	Ընդհանուր մասնակիցներ N = 773 ^d % (n)	Հիվանդանոցների բուժանձնակազմ N= 407 % (n)	ԱԱՊ օդակի բուժանձնակազմ N = 366 % (n)
Դրական ՊՇՌ թեստ			
Այո	4.0 (31)	4.4 (18)	3.6 (13)
Ոչ	96.0 (742)	95.6 (389)	96.4 (353)
Ախտորոշման ամիս ^e			
Մարտ	16.1 (5)	22.2 (4)	7.7 (1)
Ապրիլ	41.9 (13)	66.7 (12)	7.7 (1)
Մայիս	25.8 (8)	5.6 (1)	53.8 (7)
Հունիս	9.7 (3)	0	23.1 (3)
Հուլիս	3.2 (1)	-	7.7 (1)
COVID-19-ով վարակման աղբյուրը՝ ըստ մասնակցի			
Հիվանդներ	51.6 (16)	61.1 (11)	38.5 (5)
Գործընկեր/Բուժաշխատող	12.9 (4)	22.2 (4)	0
Տեղյակ չէ	32.3 (10)	11.1 (2)	61.5 (8)
<i>Բացակայող տվյալ</i>	3.2 (1)	5.6 (1)	0

Պատկեր 3-ում ներկայացված է ՊՇՌ հաստատված COVID-19 հիվանդության և հակամարմինների տարածվածության համեմատությունը հետազոտության ընդհանուր մասնակիցների խմբում, ինչպես նաև ըստ բուժահաստատության տեսակի: Հետազոտությունը ցույց է տվել, որ ընդհանուր առմամբ հակամարմինների տարածվածությունը միջինում մոտ 3 անգամ գերազանցում է նախկինում ՊՇՌ հաստատված COVID-19 տարածվածությանը: Հիվանդանոցում այդ տարբերությունը ավելի մեծ է (4.0 անգամ) քան ԱԱՊ օդակում (2.3 անգամ):

^d Մեկ մասնակից, ով հրաժարվել է պատասխանել COVID-19 հիվանդության ախտորոշման վերաբերյալ հարցին, ներառված չէ տվյալ խմբում անհրաժեշտ փոփոխականների բացակայության պատճառով:

Պատկեր 3. COVID-19 հակամարմինների և նախկինում ՊՇՌ մեթոդով հաստատված COVID-19-ի տարածվածությունը ընդհանուր մասնակիցների շրջանում և ըստ բուժհաստատության տեսակի^f



Նախկինում COVID-19 հիվանդություն ՊՇՌ տեստով հաստատված 31 մասնակիցներից 77.4%-ի մոտ հայտնաբերվել են հակամարմիններ, մինչդեռ 22.6%-ի մոտ չեն հայտնաբերվել:

Համաձայն Առողջապահության նախարարության 6-ի և 7-ի՝ COVID-19-ին բնորոշ հիմնական ախտանիշների մեծամասնությունը վիճակագրորեն հավաստի տարբերությամբ ավելի շատ հանդիպել են COVID-19 հակամարմիններ ունեցող մասնակիցների խմբում քան հակամարմիններ չունեցող խմբում: Այդ ախտանիշներն են՝ կոկորդի ցավ, հազ, դժվարացած շնչառություն, ջերմություն, հոգնածություն, մկանացավ, հոդացավ, համի և հոտի զգացողության կորուստ, ախորաժակի կորուստ, և փորլուծություն:

^f հիվանդանոց 4-ը և այն մասնակիցներն, ովքեր չեն մասնակցել հարցմանը (n=29) կամ հրաժարվել են պատասխանել COVID-19 ախտորոշման վերաբերյալ հարցին (n=1) ներառված չեն տվյալ պատկերում

Աղյուսակ 6. COVID-19 բնորոշ ախտանիշները ընդհանուր մասնակիցների շրջանում՝ ըստ COVID-19-ի դեմ հակամարմինների առկայության. յուրաքանչյուր ախտանիշի համար 100%-ը հաշվված է պոնակով

Փոփոխականներ	Ընդհանուր մասնակիցներ N=773, % (n)	COVID-19 ՀՄ ունեցող մասնակիցներ, % (n)	COVID-19 ՀՄ չունեցող մասնակիցներ, % (n)	p արժեք
Շնչառական ախտանիշներ[§]				0.001
Այն	19.5 (151)	31.7 (32)	17.7 (119)	
Ոչ	80.5 (622)	68.3 (69)	82.3 (553)	
Կոկորդի ցավ				0.026
Այն	12.2 (94)	19.0 (19)	11.2 (75)	
Ոչ	87.6 (677)	81.0 (81)	88.8 (596)	
Հազ				p<0.001
Այն	8.9 (69)	19.0 (19)	7.5 (50)	
Ոչ	90.8 (702)	81.0 (81)	92.5 (621)	
Դժվարացած շնչառություն				p<0.001
Այն	6.1 (47)	16.0 (16)	4.6 (31)	
Ոչ	93.5 (723)	84.0 (84)	95.4 (639)	
Քթահոսություն				0.334
Այն	3.4 (26)	5.0 (5)	3.1 (21)	
Ոչ	96.4 (745)	95.0 (95)	96.9 (650)	

[§] Ներառում է ցանկացած շնչառական ախտանիշի առկայություն

Աղյուսակ 7. COVID-19 բնորոշ ամենահաճախ հանդիպող ախտանիշները ընդհանուր մասնակիցների շրջանում՝ ըստ COVID-19 հակամարմինների ունենալու կարգավիճակի. յուրաքանչյուր ախտանիշի համար 100%-ը հաշվված է սյունակով

Փոփոխականներ	Ընդհանուր մասնակիցներ N = 773, % (n)	COVID-19 ՀՄ ունեցող մասնակիցներ % (n)	COVID-19 ՀՄ չունեցող մասնակիցներ % (n)	p արժեք
Ջերմություն				p<0.001
Այո	15.9 (123)	43.2 (35)	13.6 (88)	
Ոչ	76.2 (589)	55.6 (45)	85.9 (554)	
Զգիտեմ	0.5 (4)	1.2 (1)	0.5 (3)	
<i>Պատասխանը բացակայում է</i>	7.4 (57)			
Հոգնածություն				p<0.001
Այո	27.6 (213)	42.6 (43)	25.3 (170)	
Ոչ	72.4 (560)	57.4 (58)	74.7 (502)	
Մկանացավ				p<0.001
Այո	16.0 (124)	33.7 (34)	13.4 (90)	
Ոչ	84.0 (649)	66.3 (67)	86.6 (582)	
Հոդացավ				0.003
Այո	13.5 (104)	22.8 (23)	12.1 (81)	
Ոչ	86.5 (669)	77.2 (78)	87.9 (591)	
Համի զգացումի կորուստ				p<0.001
Այո	4.1 (32)	22.8 (23)	1.3 (9)	
Ոչ	95.9 (741)	77.2 (78)	98.7 (663)	
Հոտի զգացումի կորուստ				p<0.001
Այո	3.8 (29)	21.8 (22)	1.0 (7)	
Ոչ	96.2 (744)	78.2 (79)	99.0 (665)	
Ախորժակի կորուստ				p<0.001
Այո	5.7 (44)	20.8 (21)	3.4 (23)	
Ոչ	94.3 (729)	79.2 (80)	96.6 (649)	
Փորլուծություն				p<0.001
Այո	7.9 (61)	20.8 (21)	6.0 (40)	
Ոչ	92.1 (712)	79.2 (80)	94.0 (632)	
Գլխացավ				0.076
Այո	18.4 (142)	24.8 (25)	17.4 (117)	
Ոչ	81.6 (631)	75.2 (76)	82.6 (555)	

Փոփոխականներ	Ընդհանուր մասնակիցներ N = 773, % (n)	COVID-19 ՀՄ ունեցող մասնակիցներ % (n)	COVID-19 ՀՄ չունեցող մասնակիցներ % (n)	p արժեք
Սրտխառնոց				0.434
Այո	5.3 (41)	6.9 (7)	5.1 (34)	
Ոչ	94.7 (732)	93.1 (94)	94.9 (638)	
Ցավ որովայնում				0.139
Այո	2.7 (21)	5.0 (5)	2.4 (16)	
Ոչ	97.3 (752)	95.0 (96)	97.6 (656)	

Ըստ հարցման արդյունքների՝ մասնակիցների ճնշող մեծամասնությունը երկու տեսակի հաստատություններում էլ (հիվանդանոցներ և ԱԱՊ օդակի հաստատություններ) հետևում է վարակի վերահսկման և կանխարգելման հիմնական միջոցառումներին:

Աղյուսակ 9. Վարակի վերահսկման և կանխարգելման միջոցառումներին հետևողականությունը հիվանդանոցներում

Միջոցառումներ	n (%) ^h
Աշխատանքի ժամանակ հետևում են ձեռքերի հիգիենայի ցուցումներին	99.8 (405)
Հիվանդին դիպչելուց առաջ մաքրում են ձեռքերը ալկոհոլ պարունակող միջոցներով կամ օձառով ու ջրով	98.3 (290)
Հիվանդին դիպչելուց հետո մաքրում են ձեռքերը ալկոհոլ պարունակող միջոցներով կամ օձառով ու ջրով	99.7 (295)
Մաքրման կամ ախտահանիչ միջոցառումներից առաջ մաքրում են ձեռքերը ալկոհոլ պարունակող միջոցներով կամ օձառով ու ջրով	99.2 (258)
Կենսաբանական հեղուկների հետ կոնտակտից հետո մաքրում են ձեռքերը ալկոհոլ պարունակող միջոցներով կամ օձառով ու ջրով	98.4 (247)
Հիվանդի շրջակա մակերեսների դիպչելուց առաջ մաքրում են ձեռքերը ալկոհոլ պարունակող միջոցներով կամ օձառով ու ջրով	98.8 (343)
Հետևում են վարակի վերահսկման և կանխարգելման ստանդարտ նախազգուշական միջոցներին	100.0 (377)

^h Քանի որ որոշ մասնագիտական խմբերում մի շարք ՎՎԿ պահանջներ կիրառելի չեն եղել, համամասնությունը հաշվելիս օգտագործվել են տարբեր թվեր (հայտարար)

Աղյուսակ 10. Վարակի վերահսկման և կանխարգելման միջոցառումներին հետևողականությունը ԱԱՊ օղակում

Միջոցառումներ	% (n) ⁱ
Հետևում են ձեռքերի հիգիենայի ցուցումներին աշխատանքի ժամանակ	100.0 (366)
Հիվանդին դիպչելուց առաջ մաքրում են ձեռքերը ակոհոլ պարունակող միջոցներով կամ օձառով ու ջրով	98.8 (332)
Հիվանդին դիպչելուց հետո մաքրում են ձեռքերը ակոհոլ պարունակող միջոցներով կամ օձառով ու ջրով	99.7 (337)
Մաքրման կամ ախտահանիչ միջոցառումներից առաջ մաքրում են ձեռքերը ակոհոլ պարունակող միջոցներով կամ օձառով ու ջրով	98.1 (158)
Կենսաբանական հեղուկների հետ կոնտակտից հետո մաքրում են ձեռքերը ակոհոլ պարունակող միջոցներով կամ օձառով ու ջրով	97.3 (73)
Հիվանդի շրջակա մակերեսների դիպչելուց առաջ մաքրում են ձեռքերը ակոհոլ պարունակող միջոցներով կամ օձառով ու ջրով	100.0 (349)
Հետևում են վարակի վերահսկման և կանխարգելման ստանդարտ նախագուշակյան միջոցներին	99.2 (363)

Աղյուսակ 11-ում ներկայացված տվյալները ցույց են տալիս տարբեր անհատական պաշտպանիչ միջոցների (ԱՊՄ) օգտագործման և հակամարմինների տարածվածության կապն այն բուժաշխատողների շրջանում, որոնք սերտ շփում են ունենում COVID-19 հիվանդների հետ: Ինչպես երևում է աղյուսակում ըստ նախնական վերլուծության (unadjusted analysis) վիճակագրորեն հավաստի կապ է նկատվում միայն որոշ ԱՊՄ-ների կիրառման և հակամարմինների ունենալու/չունենալու միջև:

ⁱ Քանի որ որոշ մասնագիտական խմբերում մի շարք ՎՎԿ պահանջներ կիրառելի չեն եղել, համամասնությունը հաշվելիս օգտագործվել են տարբեր թվեր (հայտարար)

Աղյուսակ 11. COVID-19 հիվանդների հետ սերտ շփում ունեցած բուժաշխատողների համամասնությունը և ԱՊՄ օգտագործումը հիվանդների հետ շփման ժամանակ (հիվանդանոցի և ԱԱՊ օդակի աշխատակիցներ). յուրաքանչյուր ախտանիշի համար 100%-ը հաշվված է սյունակով

Փոփոխականներ	Ընդհանուր մասնակիցների թիվը N = 772, % (n)	COVID-19 ՀՄ ունեցող մասնակիցներ % (n)	COVID-19 ՀՄ չունեցող մասնակիցներ % (n)	p արժեք
COVID-19 հիվանդների հետ սերտ շփում ունենալը				0.035
Այո	68.9 (532)	78.0 (78)	67.6 (454)	
Ոչ	31.1 (240)	22.0 (22)	32.4 (218)	

ԱՊՄ կրումը հիվանդների հետ շփման ժամանակ	Ընդհանուր մասնակիցների թիվը N = 532, % (n)	COVID-19 ՀՄ ունեցող մասնակիցներ, % (n)	COVID-19 ՀՄ չունեցող մասնակիցներ, % (n)	p արժեք
Դիմակ կամ/և ռեսպիրատոր				0.678
Այո	99.8 (531)	100.0 (78)	99.8 (453)	
Ոչ	0.2 (1)	0	0.2 (1)	
Դեմքի վահան				0.438
Այո	78.9 (420)	75.6 (59)	79.5 (361)	
Ոչ	21.1 (112)	24.4 (19)	20.5 (93)	
Ձեռնոցներ				0.355
Այո	92.3 (491)	94.9 (74)	91.9 (417)	
Ոչ	7.7 (41)	5.1 (4)	8.1 (37)	
Պաշտպանիչ ակնոցներ				0.094
Այո	63.3 (337)	71.8 (56)	61.9 (281)	
Ոչ	36.7 (195)	28.2 (22)	38.1 (173)	
Մեկանգամյա խալաթ				0.283
Այո	69.2 (368)	74.2 (58)	68.2 (310)	
Ոչ	30.8 (164)	25.6 (20)	31.9 (144)	
Արտահագուստ				0.094
Այո	51.5 (274)	60.3 (47)	50.0 (227)	
Ոչ	48.5 (258)	39.7 (31)	50.0 (227)	
Գլխարկ				0.141
Այո	79.7 (424)	85.9 (67)	78.6 (357)	
Ոչ	20.3 (108)	14.1 (11)	21.4 (97)	
Բախիլներ				0.001
Այո	61.3 (326)	78.2 (61)	58.4 (265)	
Ոչ	38.7 (206)	21.8 (17)	41.6 (189)	

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Naming the coronavirus disease (COVID-19) and the virus that causes it. [https://www.who.int/emergencies/diseases/novel-coronavirus-2019/technical-guidance/naming-the-coronavirus-disease-\(covid-2019\)-and-the-virus-that-causes-it](https://www.who.int/emergencies/diseases/novel-coronavirus-2019/technical-guidance/naming-the-coronavirus-disease-(covid-2019)-and-the-virus-that-causes-it). Accessed July 23, 2020.
2. WHO. Coronavirus Disease (COVID-19) Situation Report-163.
3. Oran DP, Topol EJ. Prevalence of Asymptomatic SARS-CoV-2 Infection. *Ann Intern Med*. June 2020. doi:10.7326/m20-3012
4. COVID-19 Serology Surveillance Strategy | CDC. <https://www.cdc.gov/coronavirus/2019-ncov/covid-data/serology-surveillance/index.html>. Accessed July 23, 2020.
5. Interim Guidelines for COVID-19 Antibody Testing | CDC. <https://www.cdc.gov/coronavirus/2019-ncov/lab/resources/antibody-tests-guidelines.html>. Accessed July 23, 2020.
6. EUA Authorized Serology Test Performance | FDA. <https://www.fda.gov/medical-devices/emergency-situations-medical-devices/eua-authorized-serology-test-performance>. Accessed July 23, 2020.
7. Stringhini S, Wisniak A, Piumatti G, et al. Seroprevalence of anti-SARS-CoV-2 IgG antibodies in Geneva, Switzerland (SEROCoV-POP): a population-based study. *Lancet*. June 2020. doi:10.1016/s0140-6736(20)31304-0
8. Tsaneva-Damyanova D. SARS-CoV-2: seroepidemiological pattern in northeastern Bulgaria. *Biotechnol Biotechnol Equip*. 2020;34(1):441-446. doi:10.1080/13102818.2020.1772105
9. Korth J, Wilde B, Dolff S, et al. SARS-CoV-2-specific antibody detection in healthcare workers in Germany with direct contact to COVID-19 patients. *J Clin Virol*. 2020;128:104437. doi:10.1016/j.jcv.2020.104437
